Պատմության օլիմպիադայի դպրոցական փուլ (2024-2025 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

1. Ե՞րբ է Էջմիածնում հիմնվել Գևորգյան հոգևոր ճեմարանը.
   1/ 1771 թ. 2/ 1885 թ. 3/ 1874 թ. 4/ 1919 թ.
2. Ո՞վ էր գլխավորում 703 թ. հակաարաբական ապստամբությունը:
   1/ Արտավազդ Մամիկոնյան 2/ Դավիթ Մամիկոնյան
   3/ Աշոտ Բագրատունի 4/ Սմբատ Բագրատունի
3. Որտե՞ղ է գործել «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը.
   1/ Վան 2/ Մոսկվա 3/ Ալեքսանդրապոլ 4/ Կարին
4. Ո՞վ է եղել Հայաստանի առաջին հանրապետության երրորդ վարչապետը.
   1/ Ալ. Խատիսյան 2/ Ս. Վրացյան 3/ Հ. Օհանջանյան 4/ Հ. Քաջազնունի
5. Ո՞ր թվականին է տեղի ունեցել Օսխայի (Ոսխա) ճակատամարտը.
   1/ 297 թ. 2/ 256 թ. 3/ 335 թ. 4/ 292 թ.
6. Քանի՞ դար է գոյություն ունեցել Կարսի (Վանանդի) թագավորությունը.
   1/ 1 2/ 3 3/ 2 4/ 4
7. Ո՞ր զորավարությունն էր ղեկավարում Արտաշես Ի-ի զորավարներից Սմբատ Բագրատունին.
   1/ հյուսիսային 2/ արևելյան 3/ հարավային 4/ արևմտյան
8. Ե՞րբ է Կորբուլոնը գրավել Արտաշատը.
   1/ 58 թ. 2/ 296 թ. 3/ 62 թ. 4/ Ք. ա. 68 թ.
9. Ե՞րբ է Տոկուգավան դարձել Սյոգուն
   1/ 1368 թ. 2/ 1644 թ. 3/ 1603 թ. 4/ 1556 թ.
10. Ո՞ր դարում է ձևավորվել Պելոպոնեսյան միությունը:
    1/ Ք. ա. 4-րդ 2/ Ք. ա. 12-րդ 3/ Ք. ա. 7-րդ 4/ Ք. ա. 6-րդ
11. Ո՞վ է գլխավորել 1860 թ. Սիցիլիայում բռնկված ապստամբությունը:
    1/ Վիկտոր Էմանուիլ II 2/ Օտտո Բիսմարկ 3/ Ջուզեպպե Գարիբալդի 4/ Ա. Սեն-Սիմոն
12. Որքա՞ն բնակչություն էին ներառում Երկրորդ աշխարհամարտին մասնակից պետությունները:
    1/ 1,5 մլրդ 2/ 1,7 մլրդ 3/ 800 մլն 4/ 2 մլրդ
13. Ո՞վ է «Բայց, այնուամենայնիվ, այն պտտվում է» արտահայտության հեղինակը:
    1/ Անդրեաս Վեզալիուս 2/ Գալիլեո Գալիլեյ 3/ Ջորդանո Բրունո 4/ Ֆրենսիս Բեկոն
14. Ընտրե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ տարբերակը:
    ա/ Թագավորության հռչակումը Կիլիկիայում
    բ/ Լևոն 1-ինի որդիների գերեվարումը
    գ/ Ռուբինյան իշխանության հիմնումը
    դ/ Թորոս 2-րդի կառավարման ավարտը
    ե/ Սսի հռչակումը մայրաքաղաք

    1/ գ, դ, բ, ե, ա 2/ գ, բ, ե, դ, ա 3/ բ, գ, դ, ա, ե 4/ գ, բ, դ, ե, ա
15. Ընտրե՛ք ճիշտ զույգերով տարբերակը:

1. Մարգար Առուստամով	ա/ երկրաքիմիա
2. Անդրեաս Արծրունի	բ/ պատմագիտություն
3. Հակոբ (Ջակոմո) Չամչյան	գ/ լեզվաբանություն
4. Անտոն Գարագաշյան	դ/ բժշկագիտություն
5. Հրաչյա Աճառյան	ե/ քիմիա

    1/ 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-գ 2/ 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ, 5-ա
    3/ 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-գ 4/ 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ
16. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:
    1/ Անդրանիկը իր զենքերը 1919 թ. գարնանը հանձնել է կաթողիկոսին և հեռացել Հայաստանից:
    2/ «Վարդան Զորավար» զրահագնացքի կապիտան Սարգիս Մուսաելյանը ղեկավարել է Փետրվարյան ապստամբությունը:
    3/ 1919 թ. դեկտեմբերի 31-ին հայ-վրացական պատերազմում ռազմական գործողությունները դադարել են:

4/ Փարիզի խորհրդաժողովին մասնակցում էին հայկական երկու պատվիրակություններ Ալեքսանդր Խատիսյանի և Պողոս Նուբար փաշայի ղեկավարությամբ:
5/ 1920 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված պայմանագրով Ֆրանսիան Կիլիկիան վերջնականապես հանձնել է Թուրքիային:
6/ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում՝ ընդամենը մեկ տասնօրյակում, հայկական բանակը կորցրել է Կարսն ու Ալեքսանդրապոլը:

17. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:

1/ Հին Հունաստանում Աշխարհաժողովը ենթարկվում էր Պետական խորհրդին:
2/ Պիսիստրատի օրոք ստեղծված կառավարման բարձրագույն նոր մարմինը կոչվում էր ստրատեգոսների խորհուրդ:
3/ Սոլոնի կառավարման տարիներին Պետական խորհրդում և Կառավարությունում ընտրվելու իրավունք ունեին բոլոր քաղաքացիները:
4/ Սպարտայում Ծերակույտի անդամները 28-ն էին և ընտրվում էին ցմահ:
5/ Սպարտայում աշխարհաժողովը հրավիրվում էր ամիսը մեկ անգամ:
6/ Հելոտները նվաճված և ստրկացված դորիացիներն էին:

18. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ Խորհրդային իշխանության առաջին ամիսներին ձերբակալվեցին ՀՀ նշանավոր գործիչները Հ. Օհանջանյանը, Լ. Շանթը և ուրիշներ:
2/ Հայաստանի փրկության կոմիտեի նախագահն էր Սիմոն Վրացյանը:
3/ 1921 թ. ստեղծվեց ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը, որի նախագահ նշանակվեց Ստեփան Շահումյանը:
4/ 1922 թ. դեկտեմբերի 30-ին ձևավորված ԽՍՀՄ կազմում կային 4 պետություններ:
5/ Հայաստանում նէպին անցումը կատարվել է աստիճանաբար, որի առանցքում էր պարենհարկի կիրառումը:
6/ 1928 թ. Հայաստանի տնտեսությունը հասել է 1913 թ. մակարդակին:

19. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:

1/ 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքված պայմանագրով Անդրկովկասը բաժանվեց Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև:
2/ Դավիթ Բեկի առաջին լուրջ հաղթանակը տեղի ունեցավ 1722 թ. աշնանը ջևանշիր կոչվող ցեղի դեմ:
3/ Խաչենի մելիք Եգանը եղել է Խամսայի մելիքությունների կառավարիչ:
4/ 1760-ական թթ. Հովսեփ Էմինը հանգրվանել է Գետաշենում՝ Գյուլիստանի մելիք Հովսեփի մոտ:
5/ 1813 թ. կնքված Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին էին անցնում Լոռին, Փամբակը, Շամշադինը, Նախիջևանը, Արցախը, Զանգեզուրը և այլ տարածքներ:
6/ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Լոռի-Փամբակում մարտնչում էին Գրիգոր Մանուչարյանի ջոկատները:
7/ 1849 թ. ձևավորված Երևանի նահանգի մեջ մտնում էին Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Բայազետի և Օրդուբադի գավառները:
8/ 1783 թ. Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքված Գեորգևսկի դաշնագրով Ռուսաստանն իր հովանու տակ էր վերցնում և զորք տրամադրում Վրաստանին:
9/ «Որոգայթ փառաց» գիրքը սահմանադրական միապետություն ստեղծելու նախագիծ էր:

20. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ Երկրորդ աշխարհամարտում 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան մասնակցել է Ստալինգրադի մարտերին և վերանվանվել 51-րդ գվարդիական դիվիզիայի:
2/ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանցը) ԽՍՀՄ ավիացիայի մարշալ էր:
3/ ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանին և օդաչու Նելսոն Ստեփանյանին շնորհվել է Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում:
4/ Բուլղարիայի պարտիզանական պայքարի հերոսներից էր Հերմինե Ռազգրադյանը (Ռազկրատյանը):

5/ Էռնեստ Դերվիշյանը Երկրորդ աշխարհամարտին իր մասնակցության համար արժանացել է ԱՄՆ բարձրագույն պետական պարգևի:
6/ 1943 թ. Երևանում բացվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը:
7/ Խորհրդային շրջանի քանդակագործ Արա Սարգսյանի գործերից է «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» քանդակը:
8/ 1920-ական թթ. նկարահանված «Նամուս» ֆիլմը առաջին հնչյունային կինոնկարն է:
9/ Քիմիական արդյունաբերության զարգացման բնագավառում մեծ ներդրում ունեցան Հովհաննես Կարապետյանն ու Տիգրան Ջրբաշյանը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

14.01.2025 թ.